— Ցանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով պատուիրի կարգել զՏ. Թադէոս վարդապետն Առիւծեան վանահայր Ս. Սարգսի վանից Տփղեաց և կառավարիչ կաղուածոց Ս. Աթոռոյս ի քաղաքին. թ. 360։

— Ցանուն Գէորգ Աղայի Կրասիլնիկեան Նոր Նախիջևանցւոյ, որով կարգի զանձապետ Ս. Էջմիածնի յեկեղեցին Ս. Աստուածածնի. թ. 372։

— Ցանուն Միրզայի Պողոսեան Դարբանդցւոյ, որով կարգի զանձապետ Ս. Էջմիածնի յեկեղեցին քաղաքին. թ. 373։

— Հաստատութեան Հոգաբարձութեան Եկեղ.—ծխ. ուսումնարանաց Եկատերինոգարի. թ. 374։

ՎՐԻՊԱԿ.

Ապրիլի համարում սխալմամբ 178 էջի փոխարէն տպագրուած է 168 և այնպէս շարունակուած է մինչև վերջը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. Քրիստոնէի գերակայ գաղափարը Գ. Ս. . 185
2. Եկեղեցին եւ աղքատների խնամատարութեան գործը . . Գ. Ս. . . 183
3. Իրենէոս ծն. Նշխարներ Նորա գրուածներից . . . . Կ. Վ. . . 189
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 193

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5. . . . . Յ. Յովհաննիսեան . 310
6. Մարգարէից գրքերի հետքերը Նոիէի պատմութեան մէջ . . . Ս. Յ. . . 211
7. Պարթեւները Պարսկաստանում. . Ն. Ք. . 215

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

8. Մի գլուխ Նորագոյն թուաբանութիւնից Ս. Մ. 217
9. Հայոց եկեղեցական երաժշտութիւնը ԺԹ. դարում . . Կոմիտաս վարդապետ . 221
10. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ 226

ԱԶԳԱՑԻՆ.

11. Հայաստանեայց եկեղեցւոյ տարագիր զաւակները 226
12. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ 229
ՄԱՅՐ ԱԹՈՌ . . . . . .
ՏԱՃԿԱՀԱՅՔ. 250

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. 252

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
ՑԱՒԵԼՈՒԱԾ. 253
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՑԱՒԵԼՈՒԱԾ ԸՆԹԵՐՑԻ 1897 Թ. ՄԱՅԻՍ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ.

Տարւոյս Արարատ ամսագրի Յունուարի տետրակի մէջ Կ. Կ. սոսրագրութեամբ և կանոն Թադէոսի առաքելոյ վերնագրով յօդուածի վերջում հրատարակուած՝ 10 տուն նոյն վերնագրով էջ շարականը կարդալուց յետոյ, Նուխուոյ բարեկր. Սիմէօն քահանայն Տէր Պողոսեանց ներկայացրեց ինձ մի տպեալ Շարակնոց, որի առաջին երեսում տպուած է.—

ՏՊԵԱԼ

Ի Վ.ԵՂԱՓԱՌ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵԱՌՆ ՍԻՄԷՕՆԻ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ՔԱՂԱՔԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՏԵԱՌՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՍՐԲԱԶԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՊՕԼԻՍ

ՀՐԱՄԱՆԱՒ ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՏԵԱՌԻՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

յամի փրկութեան մերոյ 1768
ի Հայոց . . . . . *ՌՄԺԷ*

Ի ՏՊԱՐԱՆԻ

ՏԻՐԱՑՈՒ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՒ ՏԻՐԱՑՈՒ ՅԱԿՈԲԱՅ։

Այս Շարականոցի մէջ Արեւելք զերարփին-ից յետոյ տպուած է յիշեալ «Կանոն Թադէոսի առաքելոյ» վերնագիր կրող էջ. տասը տուն շարականը, — երը ։ փոխուած և ունի հետևեալ վերնագիրը։

«Երկոքինք Շարականքս այսոքիք (բացի նախաւերելոց) ոչք հետևին կրկին հանդերձ իւր սաւրբն, այսինքն սուրբ առաքելոյն Թադէոսի և սրբոյն Գէորգեայ, եղեն գտանեցեալ ի հին և յեղծեալ շարակնոցէ ումեքէ, որ է գրեալ ի Թուին Հայոց ի 608, և վասն այնր եդան ասա ի Նորում տպագրութեան, որպէս զի՝ և զայնս երգելի գոլ ծանիցեն ընդ այլոց երգեցեալս։

Այդ շարականը՝ «Այսօր ցնծան» գրուած է իբրև Օրհնութիւն, որին հետևում են և հետևեալները, հոյ. մշ. ոչ. պ. դ. և ն։

Սորանից յետոյ գրուած է—կանոն սրբոյն Գէորգայ զօրավարին։

Այդ Շարականոցի մէջ Քրիստոսի Հարութեան և երկու աշակերտաց կանոնից յե-

տոյ գրուած է սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, ՃԻ, Հ, Ա, և Ա, որոնք օրինակելով՝ աւելացրի շարականներիս տակ։

Այս շարականները արտագրուած են ամենայն ճշտութեամբ և անփոփոխ. աւելորդ չի լինիլ ասել, որ այս Շարակնոցի մէջ տպուած է և սրբոյն Գէորգայ զօրավարի Քաջամարտիկ Օրհնութիւնը, որն արդէն մուծուած է Ձայնագրեալ Շարակնոցի մէջ։

Սահակ վրդ. Բաղդասարեանց։

22 Մարտի 1897 թ.
Նուխի։

Նուխուոյ յաջորդի Արժ. Բաղդասարեան Սահակ վարդապետի ձեռք բերած այս բոլոր շարականները ունենք և մենք Անձանօթ Շարականք վերնագրով մեր անտիպ Ժողովածուի մէջ, որոնք քաղել ենք Մայր Աթոռիս Մատենադարանի բոլոր ձեռագիր Շարականներից։ Եւ որպէս զի յիշեալ Արժ. Հօր ուղարկած շարականների տպագրութիւնը կատարեալ լինի, ուստի մենք մեր կողմից աւելորդ չհամարեցինք բաղդատել այդ բոլորը մեր ձեռքում գտնուած օրինակների հետ, յիշելով միանգամայն, թէ ի՞նչ համար կրող ձեռագիր Շարականների մէջ են գտնուում նոքա։ Արդ՝ ստորև գրուած շարականներից՝ սրբոյն Թադէոսի Այսօր ցնծան խրախճանապէս Օրհնութիւնը իւր լծորդ Հց-ի, ՄԺ-ի, Ո-ի, Ց-ի, Մկ-ի և Ճշ-ի հետ գտնուում են 1587—ԺԶ, 1594—ԻԳ, 1612—ԼԱ, 1622—ԺԱ, 594—ԿԴ և 599—ԿԹ (կրճատ գրութեամբ) Շարականների մէջ։ Օրհնութիւնը գտնուում է և 1581—Ժ (կրճատ գրութեամբ) Շարականում, իսկ Մկ—ը և Ճշուն՝ և 1613—ԼԲ Շարականի մէջ։

Սոյն շարականներին յաջորդող սրբոյն Գէորգայ զօրավարի Քաջամարտիկ սուրբ նահատակ (որ պակասում է իւր կարգից) Օրհնութեան հետ շղթայուած Գովեալ զնոցից Օրհնութիւնը իւր լծորդ Հց-ի, Ո-ի, Ց-ի և Մկ-ի հետ գտնուում են միմիայն 594—ԿԴ Շարականի մէջ. իսկ Հզաւոր եւ յաղթող գողտրիկ մի անձանօթ շարականը, որ ինձ թուում է թէ ճաշու լինի, և ի լրումն այս կարգի, աւելացրինք մենք, սա էլ գտնուում է 1588—ԺԷ Սարգիս երէցի Շարականի մէջ, և գրուած է քաջայաղթ զօրավարիս Ով սուրբ Գէորգ ծանօթ Մկ-ի տակ։ Ի գիտութիւն մեր ընթերցողներին յայտնում ենք վաւերական Մանկունքիս մասին և այս, որ տպագրուած Շարականների մէջ այս Մանկունքը գրուած է ԺԵ Մարտիրոսաց կարգում, որին թերևս շատերը անգիտութեամբ վերագրեն Մարտիրոսաց կարգը գրող Պետրոս գետադարձին, մինչդեռ այս փոփոխութիւնը Մանկունքիս հետ նոր է, և Մանկունքիս նորութեան մասին վկայում է յիշեալ Սարգիս երէցը իւր Շարականի հետ գրած Ցօնացուցում՝ ասելով, «Եր. Ցաւն սրբոյն Գէորգեայ զաւրավարի. Հցն. զկ. Զինուորութիւնք հրեշտակ. մկ. նոր ասա. և թէ ոչ. Զինաւորն Քրիստոսի. (Մարտիրոսաց ԺԵ. Դ.) Մեհեկի. ԻԳ.»։ Ի նշան Մանկունքիս նորութեան գրուած է նաբաց ձևով։

Այս շարականներին յաջորդող սրբոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոց Անարկելոյն Աստուած անձանելի մի այլ Օրհնութիւնը իւր լծորդ Հց-ի, Ո-ի, և Ց-ի հետ գտնուում են միմիայն 594—ԿԴ Շարականի մէջ։

Երջանկայիշատակ Գէորգ կաթուղիկոսը ի նկատի ունենալով, որ մեծ առաքեալներս իրենց տօների ժամանակ չունին երգուելիք մի յատուկ շարական, այս իսկ պատճառաւ 1875 թուին յիշեալ շարականները մուծեց Ձայնագրեալ Շարականի մէջ, ինքն իրենից սաեղծելով նոցա ձայնը և ձայնագրել տալով։

Արդ՝ թողնելով Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոց անունով յօրինուած այս վերջին Օրհնութիւնը, Հց-ը, Ող-ն, և Ց-ը, որոց մասին չգիտեմ թէ ո՞ր դարու գործ են և մեր եկեղեցու ո՞ր սրբազան պաշտօնեայն է, հոգւով ոգեշրել, գառնանք այժմ Ցէր Պօղոսեանց բարեկրօն Սիմէոն քահանայի՝ իւր գերապատիւ յաջորդին ներկայացրած «հին և եղծեալ» Շարականին, «որ է գրեալ ի թուին Հայոց 608 (ՈԸ—1159) և որի մէջ պարունակում են «երկոքին շարականքս այսոքիկ»՝ այսինքն, «սուրբ առաքե-